

**ՊՈՂՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿԱԶՄԱԾ  
«ԳԱՆՁԱՐԱՆ ՀԱՅ ՀԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ»  
ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԱՍԻՆ**

*Բանայի բառեր՝ միջնադարագիտություն, գրականության ինստիտուտի հին գրականության բաժին, հայ միջնադարյան բանաստեղծություն, Վերածնունդ, հայ միջնադարյան գրականության ժամանակագրություն, հայրեններ, Վ. Բրյուսով*

Պարտք եմ համարում նախ երկու խոսք ասել Պողոս Խաչատրյանի մասին՝ իբրև հայ բանասիրության լավագույն ներկայացուցիչներից մեկի: Տարիներ շարունակ աշխատել եմ Պողոսի հետ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտում: Երբ ես եկա ինստիտուտ, նա արդեն հայտնի էր իբրև հայ հին գրականության հետազոտող. այդ տարիներին Արշալույս Ղազինյանի հետ նրանք սկսել էին Նարեկացու Մատյանի քննական տեքստի կազմումը: Մենք՝ երիտասարդներս, ակնածանքով էինք նայում նրանց: Պետք է ասեմ, որ հին գրականության բաժինը, որտեղ աշխատում էր Խաչատրյանը, հայ միջնադարագիտության կենտրոններից մեկն էր, որտեղ աշխատում էին համբավ ու վաստակ ունեցող գրականագետներ Մայիս Ավդալբեկյանը, Արմենուհի Սրապյանը, Հասմիկ Սիմոնյանը, Հասմիկ Սահակյանը, Մանիկ Մկրտչյան-Քոչարը, Վարագ Ներսիսյանը և ուրիշներ: Այդ համաստեղության մեջ Պողոսի համբավը, թեև համեմատաբար երիտասարդ էր, չէր խամրում: Իննսունական թվականներին նա տեղափոխվեց համալսարանի հայ գրականության պատմության ամբիոն: Երբ ես՝ իբրև ինստիտուտի տնօրեն, հնարավորություն ունեցա, Պողոսին նորից հրավիրեցի ինստիտուտ, որտեղ նա աշխատեց մինչև իր կյանքի վերջը:

Զարմանալիորեն նվիրված էր իր գործին. նա ինձ հիշեցնում էր մեր հին պատմիչներին, որոնք «մի նշխարով և մի կում ջրով», առանց աշխարհիկ վայելքներով տարվելու, ստեղծում էին իրենց մատյանները: Չեմ կարող այստեղ չասել նաև, որ Զավախքը հայ բանասիրությանը և հայագիտությանը տվեց կարկառուն դեմքեր, և Պողոսը նրանց մեջ էր: Այսօրվա գիտաժողովը մեր անկեղծ հարգանքի տուրքն է Պողոս Խաչատրյանի հիշատակին ու գործին:

Այդ գործերը շատ են, և դրանց մասին այսօր դեռ կխոսվի: Ես ուզում եմ խոսել դրանցից մեկի մասին, որը, իմ համոզմամբ, շատ կարևոր տեղ է գրավում նրա ժառանգության մեջ: Ես ուզում եմ համառոտ ներկայացնել այն

սկզբունքները, որոնց վրա նա հենվել է «Գանձարան հայ հին բանաստեղծության» ժողովածուն կազմելիս, և այդ առիթով մի քանի մտքեր արծարծել: Նախ, բուն այդ ժողովածուն վերջին դժվար տարիների հայ գրական-մշակութային կյանքի կարևորագույն իրադարձություններից էր: Ուղղակի պետք է ասել, որ հայ իրականության մեջ այդքան ամբողջական, համապարփակ որևէ ժողովածու մինչ այդ չէր եղել: Անշուշտ, չենք կարող մոռանալ Մ. Աբեղյանի, Ա. Չոպանյանի և մյուսների ժողովածուները: Բայց դրանցից ոչ մեկը նպատակ չի ունեցել տալու հայ հին բանաստեղծության ամբողջական պատկերը: Ներկայացվել են միայն առանձին ժանրեր, ուղղություններ (Հայրեններ, Գուսանական ժողովրդական տաղեր, Խաղիկներ և այլն), ինչպես նաև միջնադարյան հեղինակների գործերը:

Խաչատրյանի կազմած ժողովածուն սուկ համահավաք չէ, այլ գիտական որոշակի սկզբունքներով կառուցված գիրք: Փաստորեն, առաջին անգամ կողք կողքի ներկայացված են բանահյուսական և գրավոր-հեղինակային երգերը: Մա արդեն նշանակում է հայ խոսքարվեստի պատմության որոշակի կոնցեպցիա: Այդ պատմությունը միասնական է, ինչքան էլ մեծ տարբերություններ տեսնենք ժողովրդական աշխարհատեսության (բանահյուսություն) և գրավոր գրականության միջև: Երեսնական թվականներին, երբ նշվում էր հայկական էպոսի հազարամյակը, կարծիք է արտահայտվել, որ էպոսը միջնադարում չի գրառվել դասակարգային հակասությունների պատճառով. պատմագիրները, մատենագիրները, առհասարակ գրագետ մարդիկ ներկայացնում էին տիրող խավերին և արհամարհում էին ժողովրդի ստեղծած էպոսը: Խնդիրը, իհարկե, քննության կարիք ունի, բայց ոչ այսպիսի սոցիոլոգիական մոտեցումով: Եվ կարծես ի պատասխան նման պարզունակ մոտեցումների՝ Խաչատրյանը իր ժողովածուի մեջ է ներառել նաև մեծ հատվածներ «Մասունցի Դավթից» և չնայած թռուցիկ՝ զուգահեռ է անցկացրել էպոսի և հայ միջնադարի գրավոր խոսքի մեծ հուշարձանի՝ Նարեկացու «Մատյանի» միջև: Ուրիշ տեսակետներից գուցե կարելի էր առարկել էպոսի հատվածները այս ժողովածուում ընդգրկելուն: Բայց հայկական խոսքարվեստի միասնությունը ցույց տալը այդ մոտեցման առավելությունն է:

Ժողովածուի կարևոր առանձնահատկություններից մեկը հայրենների հեղինակների խնդրի լուծումն է: Բանասերներին լավ ծանոթ այս խնդիրն արդեն տասնամյակներ քննարկման առարկա է: Չնայած շատ համոզիչ փաստարկներ են բերվել հոգուտ այն բանի, որ Քուչակը չէր կարող լինել հարյուրավոր հայրենների հեղինակը, որոնք ստեղծվել են երկու-երեք դարերի ընթացքում, մինչև այժմ այդ վարկածը շարունակում է գոյատևել:

Խաչատրյանը վճռականորեն պաշտպանում է այն տեսակետը, որ հայրենները ժողովրդական են կամ առնվազն մեկ հեղինակի ստեղծագործություն չեն, և հենվում է իրենից առաջ Աբեդյանի, Չոպանյանի, Մնացականյանի արտահայտած կարծիքների վրա: Հայրենները բերված են գրքում առանց հեղինակին նշելու: Այսօր հայ գրականագիտական-բանասիրական միտքը կարծես թե վերջնականապես հակվում է դեպի այդ ճիշտ տեսակետը: Պատահական չէ, որ հենց Խաչատրյանի աշակերտներից մեկը՝ Վանո Եղիազարյանը, դոկտորական թեզ պաշտպանեց՝ համոզիչ փաստարկներ բերելով այդ տեսակետի օգտին:

Շատ կարևոր հարց է ժողովածուի ժամանակագրական ընդգրկումը, որն ուղղակիորեն արձագանքում է հայ գրականության պատմության շրջանաբաժանման խնդրին: Նախ, Խաչատրյանը սրբագրում է Աբեդյանի տեսակետն այդ շրջանաբաժանման վերաբերյալ՝ Աբեդյանի կողմից Վերածնունդ համարվող շրջանը՝ 11-17-րդ դարերը, իրավացիորեն բաժանելով երկու մասի՝ 11-14-րդ դարեր, երբ հայ քնարերգությունը իսկապես ծաղկում էր, և 15-17-րդ դարեր, որոնք, ըստ էության, անկման շրջան էին: Այս առիթով, թեկուզ հարևանցի, երևի պետք է խոսենք մի ավելի կարևոր խնդրի մասին: Նախ և առաջ, հայկական վերածնության երևույթի մանրամասն քննության անհրաժեշտության մասին: Մինչև այժմ Հայաստանում այդ խնդրին նվիրված գրքերից հիշեմ Ա. Հարությունյանի գիրքը (Альфред Арутюнян, Западная Европа. От раннего христианства до Ренессанса, Наирн, 2000)՝ մի հանգամանակից և համոզիչ հետազոտություն, որը կարելի է վիճարկել, բայց շրջանցել չի կարելի: Այդ գիրքը ելնում է արևմտաեվրոպական նյութից՝ հարևանցի անդրադառնալով հայկական Վերածնությանը: Մեր միջնադարյան մշակույթի ճիշտ ըմբռնման համար անհրաժեշտ է խնդրի խորացված քննություն՝ չխուսափելով այն հարցից, թե հիմքեր ունե՞նք խոսելու հայկական Վերածնության մասին, եթե ելնում ենք տերմինի այն ըմբռնումից, որը ձևավորվել է Արևմտյան Եվրոպայի մշակույթի զարգացման օրինաչափությունների հիման վրա: Մենք պետք է հասկանանք մեր մշակույթի առանձնահատկությունները՝ առանց դրանք հարմարեցնելու պատրաստի թեզերին և վերնագրերին: Այստեղ կարելի է վիճել Խաչատրյանի հետ այն դեպքերում, երբ նա օգտագործում է «Վերածնություն» տերմինը:

Բայց այս հարցը ավելի մասնավոր է դառնում, երբ փորձում ենք քննել հայ միջնադարյան (կամ հին, ինչպես Պ. Խաչատրյանն է գրում) գրականության ուսումնասիրվածության աստիճանը: Անշուշտ, մենք պարտավոր ենք հարգանքով հիշել հայ բանասերների մեծ աշխատանքը՝ կատարված հայ միջնա-

դարյան քնարերգության ուսումնասիրության ասպարեզում, մանավանդ Պողոսի անմիջական գործընկերների կազմած ժողովածուներն ու գրած ուսումնասիրությունները: Բայց մենք չունենք միջնադարյան պոեզիայի մասին մի ընդհանրացնող աշխատություն: Ես կարող եմ հիշել միայն մի այդպիսի գործ՝ կատարված ռուս հետազոտողի կողմից՝ Վալերի Բրյուսովի մեծ հոդվածը՝ գրված “Поэзия Армении” ժողովածուի համար: Այդ հոդվածը, ինչպես և ողջ ժողովածուն, մեծ դեր կատարեց հայ միջնադարյան բանաստեղծության տարածման և գնահատման գործում: Այսօր էլ դա հետաքրքրությամբ է կարդացվում՝ հենց իբրև օտարի հիացական հայացք մեր գրականությանը: Բայց վաղուց ժամանակն է, որ մենք ստեղծենք այդպիսի աշխատություն կամ աշխատություններ՝ հաշվի առնելով այն հսկայական նյութը, որը կուտակվել է վերջին հարյուրամյակում:

Ինչևէ, վերադառնանք Պողոսի կազմած ժողովածուին: Այն ընդգրկում է նախաքրիստոնեական կամ նախամեսրոպյան շրջանից մինչև 18-րդ դարի վերջը՝ մինչև Սայաթ-Նովան: Սկիզբը վեճեր հարուցել չի կարող, բայց ահա վերջը, ինչպես պարզվեց, այնքան էլ անվիճելի չէ: Մի քանի տարի առաջ Մոսկվայում լույս տեսած՝ հայ գրականության ժողովածուում (Ты, вечная моя Армения, 2010) հայկական միջնադարի ավարտը ետ է բերվում մինչև 18-րդ դար՝ այն հիմնավորումով, որ այդպես է ընդունված Եվրոպայում: «Ներկա ժողովածուում Սայաթ-Նովան ներկայացված է ոչ իբրև միջնադարի հեղինակ, այլ իբրև նոր ժամանակի՝ XVIII դարի հայ պոեզիայի ստեղծող-սկզբնավորող: XVIII հարյուրամյակում միջնադարի դարաշրջանը ամբողջ Եվրոպայում արդեն ավարտվել էր: Համապատասխանաբար ուշ միջնադարի՝ XVI-XVII դդ. բանաստեղծների, մասնավորաբար Նաղաշ Հովնաթանի ստեղծագործությամբ Հայաստանում էլ ավարտվեց միջնադարի պոեզիան: Սայաթ-Նովայի անունով սկսվում է նոր դարաշրջան հայ գրականության մեջ» (էջ 46): Այս մեջբերման մեջ հատուկ ուշադրություն է գրավում «համապատասխանաբար» բառը: Այստեղ տեղ են գտնում երկու սխալ. նախ, գրականության պատմության շրջանաբաժանման օրինաչափությունները պետք է բխեցվեն միայն ազգային գրականության առանձնահատկություններից, ոչ թե համապատասխանեցվեն եվրոպական գրականության զարգացման օրինաչափություններին: Երկրորդ՝ ինչքան էլ մեզ համար կարևոր լինեն եվրոպական պատմության օրինաչափությունները, մենք պարտավոր ենք առաջնորդվել մեր պատմության օրինաչափություններով, և այս ելակետից մենք դժվար թե կարողանանք հիմնավորել, որ նոր շրջանը Հայաստանի պատմության մեջ սկսվում է 18-րդ դարով: Դժբախտաբար, այդ դարերում մենք արդեն շատ հետ էինք մնացել եվրոպա-

կան զարգացումից: Պողոս Խաչատրյանը առաջնորդվում է ընդունված տեսակետով (ընդունված նաև Մանուկ Աբեղյանի կողմից)՝ հայ նոր գրականության սկիզբը համարելով 19-րդ դ. սկիզբը և, հետևաբար, հայ միջնադարի վերջին հեղինակ՝ Սայաթ-Նովային: Ընդ որում, նա այս դեպքում ընտրում է շատ ճիշտ ձևակերպում՝ 17-րդ և 18-րդ դդ. հեղինակներին՝ Պաղտասար Դպիրին, Պետրոս Ղափանցուն և մյուսներին համարելով հայ նոր գրականության նախաշեմի հեղինակներ: Դրանով և՛ ցույց է տրվում հիշված հեղինակների ճիշտ տեղը պատմության մեջ, և՛ ցուցադրվում է անցման իրողությունը: Այստեղ մի թռուցիկ անդրադարձ կատարեմ Մանուկ Աբեղյանի տեսակետին: Իր հայտնի «Հայոց հին գրականության պատմություն» գրքի երկրորդ հատորում ասում է, որ հայոց հին գրականության չորրորդ շրջանը ընդգրկում է **«17-19-րդ դարի առաջին երրորդը ներառյալ»**, այսինքն՝ միջնադարի մեջ է դնում նույնիսկ 19-րդ դարի սկիզբը (տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 570, ընդգծումը իմն է):

Իմ՝ վերջերս լույս տեսած գրքում՝ «Հայ նոր բանաստեղծության Ոսկեդարը», համառոտ հայացք նետելով հայ պոեզիայի պատմությանը, ես ելակետ եմ ընդունել նախ և առաջ Պողոսի կազմած «Գանձարանը»: Օգտվելով առիթից, որ այստեղ ներկա է Պողոսի գործընկերներից մեկը՝ պրոֆ. Հենրիկ Բախչինյանը, ասեմ, որ նա ևս այն կարծիքին է, որ հայոց միջնադարը ավարտվում է 18-րդ դարով: Այս անցումի խնդիրը ևս կարոտ է մանրագնին գրական-տեսական հետազոտության, որի համար Պողոս Խաչատրյանի աշխատանքը լավ հիմք է ստեղծում: Մենք, ընդհանուր առմամբ, փաստագրական առումով լավ իմանալով հայ գրականության պատմությունը, չենք կարողանում դիտել այն իր ներքին զարգացման մեջ և իր ներքին կապերով եվրոպական և համաշխարհային գրականության հետ:

Ավարտելով իմ այս համառոտ հաղորդումը Պողոս Խաչատրյանի կազմած «Գանձարան հայ հին բանաստեղծության» ժողովածուի մասին՝ մի անգամ ևս ուզում եմ ընդգծել նրա հսկայական ավանդը հայ միջնադարյան պոեզիայի ուսումնասիրության բնագավառում և մասնավորապես «Գանձարանի» մեծ արժեքը ոչ միայն ընթերցողների, այլև ուսումնասիրողների հանրության համար:

Азат Егиазарян

О СБОРНИКЕ «СОКРОВИЩНИЦА ДРЕВНЕЙ АРМЯНСКОЙ ПОЭЗИИ»,  
СОСТАВЛЕННОМ ПОГОСОМ ХАЧАТРЯНОМ

Резюме

**Ключевые слова:** *медиевистика, Институт литературы им. М. Абегамяна НАН Армении, отдел древней литературы Института армянской литературы им. М. Абегамяна, средневековая армянская поэзия, периодизация древнеармянской литературы, Возрождение, айрены, В. Брюсов*

Погос Хачатрян – один из самых известных знатоков древнеармянской литературы. Он – автор многих трудов об этом периоде истории армянской литературы. В его наследии особое место занимает сборник «Сокровищница древней армянской поэзии». Это самый полный из всех изданных до сих пор сборников такого типа. Здесь представлены все жанры древней и средневековой поэзии с начала до завершения армянского Средневековья – до начала XIX столетия. Правильная периодизация – одно из преимуществ этой книги. В своем сборнике Хачатрян окончательно решил вопрос авторства айренов – средневековых поэтических миниатюр, которые долгое время приписывали перу поэта XVI столетия Наапета Кучака. Он поместил айрены в разделах народной поэзии.

Azat Yeghiazaryan

ON THE COLLECTION BY POGHOS KHACHATRYAN  
“TREASURY OF THE ARMENIAN OLD POETRY”

Summary

**Key words:** *medieval studies, Institute of the Literature of the National Armenian Academy of Sciences, Department of the Armenian Medieval Literature of the Institute of the Literature, medieval armenian poetry, periodization of Armenian medieval literature, Renaissance, ayrens (a genre of Armenian medieval poetry), V. Bryusov*

Poghos Khachatryan was one of the most known specialists in the field of Armenian medieval literature. He worked in the department of Armenian medieval literature in the Institute of Armenian literature of the National Academy of Sciences. Among his works the collection “Treasury of the Armenian Old Poetry” occupied an important space. It is the most complete collection of the old and medieval Armenian poetry. All the genres of the Armenian poetry of that period are presented in this collection. The author appreciates Khachatryan’s approach to the periodization of old Armenian literature’s history. In this collection the period of the Armenian medieval literature extends to the end of the XVIII century. The author agreed with Khachatryan that the hajrens (հայրեն) cannot be attributed to Nahapet Kuchak. This genre was created during two or three centuries by the lot of unknown authors or folk singers.